Հոդվածի թեման՝ այն իշխանության սահմաններն ու բնույթը, որը լեգիտիմորեն կարող է կիրառվել հասարակության կողմից անհատի նկատմամբ

Կառավարողները պետք է ասոցացված լինեն ժողովրդի հետ, իրենց շահն ու կամքը պետք է լինի ազգի շահն ու կամքը:

Կառավարողների իշխանությունը ազգի սեփական իշխանությունն էր՝ կենտրոնացված կիրառման համար նպատակահարմար ձևում:

“Ժողովուրդը”, որն իրականացնում է իշխանությունը ոչ միշտ է հանդիսանում նույն այն ժողովուրդը, որի նկատմամբ այն իրականացվում է: Եվ “ինքնակառավարումը”, որի մասին խոսք է գնում, յուրաքանչյուր անհատի կառավարումը չէ ինքն իր կողմից, այլ յուրաքանչյուր անհատի կառավարումը բոլորի կողմից:

“Մեծամասնության բռնատիրությունը” այժմ ընդհանուր առմամբ ընդգրկված է այն չարիքների շարքում, որից պետք է պաշտպանվի հասարակությունը:

Միակ նպատակը, որով մարդկությունը, ինքնուրույն կամ հավաքական կազմով, լիազորված է միջամտելու իրենց կազմից որևէ մեկի գործելու ազատությանը, ինքնապաշտպանությունն է: Միակ պատճառը, որով արդարացիորեն կարող է իշխանություն կիրառվել քաղաքակրթված համայնքի որևէ անդամի նկատմամբ վերջինիս կամքին հակառակ, այլոց վնաս պատճառելը կանխելն է: Սեփական բարիքը, լինի այն ֆիզիկական թե բարոյական, բավարար արդարացում չէ: Նա չի կարող արդարացիորեն հարկադրված լինի կատարելու կամ կատարելուց հրաժարվելու որովհետև այդպես նրա համար ավելի լավ կլնի, որովհետև դա նրան կդարձնի ավելի երջանիկ, որովհետեև այլոց կարծիքով, նման կերպ վարվելը կլինի խելացի, կամ նույնիսկ ճիշտ: Սրանք լավ պատճառներ են նրան հակառակը համոզելու, կամ նրա հետ տրամաբանելու, կամ նրան աղաչելու, բայց ոչ նրան հարկադրելու:

Ազատությունն իբրև սկզբունք չի կարող առնչվել այնպիսի իրադրության հետ, որը նախորդել է այն ժամանակին, երբ մարդկությունը ունակ դարձավ զարգանալու ազատ և հավասար քննարկման միջոցով:

Մարդկությունն ավելի շատ կշահի, եթե հանդուրժի միմյանց ապրել այնպես, ինչպես իրենց է լավ թվում, քան հարկադրի ապրել այնպես, ինչպես մնացածին է լավ թվում:

Եթե ողջ մարդկությունը, բացառությամբ մեկ հոգու, մի կարծիքի լիներ, և միայն մեկ հոգի հակադիր կարժիքի լիներ, մարդկության կողմից այդ մեկ հոգուն լռեցնելը ոչ մի կերպ ավելի արդարացված չեր լինի, քան այդ մեկ անձի կողմից մնացած մարդկության լռեցնելը, եթե նա ունենար նման իշխանություն:

Շատ քչերն են անհրաժեշտ համարում զգուշանալու իրենց իսկ սխալականությունից:

Մարդիկ, և կառավարությունները, պետք է գործեն իրենց կարողությունների առավելագույն չափով:

Ցանկացած հարցի շուրջ, որն ինքնաբացահայտ չէ, 99 հոգու դիմաց, որը բացարձակապես անկարող այդ հարցը քննելու, կա միայն մեկ հոգի, որն ունակ է նման գործողության, և այս 100-րդ անձի նման ունակությունը լոկ հարաբերական է: Քանզի ամեն անցած սերնդում ապրած ակնառու մարդկանց մեծ մասը այնպիսի տեսակետներ է փայփայել, որոնք այսօր համարվում են սխալ, և կատարել կամ համաձայնություն տվել բազում բաների, որոնք այսօր ոչ մեկ չի արդարացնի:

Մենք կատարել ենք առավելագույնը/լավագույնը, որ մարդկային բանականությունը առկա վիճակը թուլատրում է:

Ճշմարտությունը կարծիքի օգտագործելիության/օգտակարության մի մասն է:

Մեր սոսկ հասարակական անհանդուրժողականությունը չի սպանում ոչ մեկի, և արմատախիլ չի անում ոչ մի կարծիք, այլ ստիպում է մարդկանց քողարկել դրանք, կամ ձեռնպահ մնալ դրանք տարածելու որևէ ակտիվ ջանքի գործադրումից:

Հարկավոր է պաշտպանվածություն նաև գերակայող կարծիքի և զգացմունքի բռնատիրությունից, պաշտպանություն հասարակության միտումից պարտադրելու, քաղաքացիական պատիժներից զատ միջոցներով, իր սեփական մտքերը և գործունեությունը որպես վարքի կանոններ բոլոր նրանց, ովքեր հակադրվում են դրանց: Առկա է սահման անհատական ազատությանը հավաքական կարծիքի լեգիտիմ միջամտության: Եվ այդ սահմանի բացահայտումը և պահպանումն ընդդեմ ոտնահարման, մարդկային հարաբերությունների լավ վիճակի համար նույնքան անփոխարինելի է, ինչքան պաշտպանվածությունը քաղաքական բռնակալությունից:

p.6

Իր նկատմամբ, իր սեփական մարմնի և մտքի նկատմամբ, անհատն ինքնիշխան է:

Հալածանքը մի բարդ փորձություն է, որի միջով ճշմարտությունը պետք է անցնի, և որի միջով այն միշտ հաջողությամբ անցնում է՝ իրավական պատիժները, ի վերջո, լինելով անզոր ընդդեմ ճշմարտության, սակայն երբեմն օգտակար հակազդեցություն գործի վնասակար սխալների դեմ: (Միլը այնուհետև հերքում է այս պնդման համընդհանրականությունը:)

p.27

p.32-33

Ինչքան էլ ճշմարիտ այն [կարծիքը] լինի, եթե այն ամբողջությամբ, հաճախ, և խիզախորեն չի քննարկվում, այն կպահպանվի իբրև մեռյալ դոգմա, և ոչ իբրև կենդանի ճշմարտություն:

p.35

Հին դարերի լավագույն հռետորը արձանագրել է, որ նա միշտ ուսումնասիրել է իր հակառակորդի փաստարկներն նույն, եթե ոչ ավելի շատ, խորությամբ, քան իրենը:

p.36

Քննարկման բացակայության պարագայում բառերը որոնք փոխանցում են [ճշմարտությունը] դադարում են մտքեր հայտնելուց, կամ արտահայտում են միայն մի փոքր հատվածը այն մտքերի, որոնք ի սկզբանե պետք է հաղորդեին: Վառ հասկացողության և կենդանի հավատքի փոխարեն, կրկնողության միջոցով պահպանվում են լոկ մի քանի բառակապակցություն: Կամ, եթե ինչ-որ բան նույնիսկ պահպանվում է, դա իմաստի միայն կեղևն է, իսկ հիմնական մասը կորչում է:

Ժառանգական հավատքների դեպքում, որոնք ընդունվում են պասիվ կերպով, և ոչ ակտիվ, երբ ուղեղն այլևս շահագրգռված չէ նախկինի պես գործի դնելու իր կենսական ուժերը իր հավատքի առաջադրած հարցերի շուրջ, կա զարգացող միտում մոռանալու ամբողջ հավատքը բացառությամբ բանաձևումների, կամ տալու նրան անտարբեր համաձայնություն, իբր ընդունելով այն, վստահելով փոխարինում է կուրորեն դրան անձնական փորձությամբ փորձելու կարիքը կամ դրան գիտակցաբարըմբռնելու անհրաժեշտությունը:

p.38-40

Ե՛վ ուսուցիչները, և՛ սովորողները գնում են քնելու իրենց դիրքերում երբ տարածքում ոչ մի թշնամի չի լինում:

Գոյություն ունեն բազմաթիվ ճշմարտություններ, որոնց ամբողջ իմաստը հնարավոր չէ գիտակցել մինչև որ այն չընկալվի անձնական փորձի միջոցով:

Մարդու բնույթը մեքենա չէ, որ կառուցվի ինչ-որ մոդելի հիման վրա և հանձնարարվի կատարելու այն աշխատանքը, որն իրեն է հատկացված, այլ ծառ է, որը պետք է աճի և զարգանա բազմակողմանիորեն , իր ներքին ուժերի հակումներին համահունչ, որոնք էլ դարձնում են նրան կենդանի:

Մարդկության մահաբեր սխալների կեսի պատճառն է հանդիսանում որևէ երևույթի մասին չմտածելու այն հակումը, երբ այն այլևս կասկածելի չէ:

p.42

Բախվող *դոկտրինաները,* մեկը ճշմարին և մյուսը սխալ լինելու փոխարեն,

ճշմարտությունը կիսում են միմյանց միջև: Ժողովրդական կարծիքները զգայարանների համար ոչ շոշափելի հարցերի շուրջ, հաճախ ճշմարիտ են, բայց սակավ կամ երբեք չեն լինում ամբողջությամբ ճշմարիտ : Մարդու մտքում միակողմանիությունն է միշտ գերակշռել:

p.44-5

Մարդկային ինտելեկտի առկա վիճակում միայն կարծիքի բազմազանության միջոցով է, որ գոյություն ունի հնարավորություն ըմբռնելու ճշմարտության բոլոր կողմերը:

p.46

Մարդու նպատակը իր ուժերի ամբողջական և լիարժեք զարգացումն է: Սրա համար կա երկու նախապայման՝ ազատություն, և իրադրությունների բազմազանություն/տեսականի:

p.54-5

Հանճարեղ մարդիկ նեղ փոքրամասնություն են կազմում: Բայց նման հանճարներ ունենալու համար, հարկավոր է պահպանել այն հողը, որի մեջ աճում են: Հանճարը կարող է ազատորեն շնչել միայն ազատության մթնոլորտում:

Օրիգինալությունը միակ բանն է, որի օգուտը հասարակ ուղեղները չեն կարող զգալ:

p.61

Քանի որ կարծիքի բռնատիրությունը հակակրանք է առաջացնում անօրինակության նկատմամբ, ցանկալի է, որ այդ բռնատիրությունը ջարդելու նպատակով մարդիկ լինեն անօրինակ: Անօրինակությունը առատ է եղել այնտեղ և երբ, որ բնավորության ուժն է առատ եղել:

p.63

Եթե անձն ընդունելի չափով ունի բանականություն և փորձառություն, գոյությունը զարգացնելու իր մեթոդը լավագույնն է, ոչ թե այն պատճառով, որ այն ինքնին լավագույնն է, այլ որովհետև դա իր սեփական մեթոդն է:

p.64

Բարելավվելու/զարգանալու միակ մշտական աղբյուրը ազատությունն է, քանզի նրանով առկա է հնարավորինս այնքան զարգացման անկախ կենտրոններ, որքան որ անհատներ կան:

p.66

Սակայն հանրության միջամտության դեմ ամենաուժեղ փաստարկը, որն առնչվում է զուտ անձնական վարքի հետ, այն է, որ երբ այն միջամտում է, հավանականությունը շատ է, որ այն սխալ միջամտություն է ցույց տալիս, և սխալ վայրում:

p.78

Ես տեղյակ չեմ, թե որևէ համայնք իրավունք ունի ստիպելու մյուսին քաղաքակիրթ լինելու, այնքան ժամանակ, որքան որ վատ օրենքներից տանջվողները չեն հայցում աջակցություն այլ համայնքներից:

p.83

Անհատը հաշվետու չէ հասարակությանը իր գործողությունների համար, որքանով որ դրանք վերաբերում են ոչ մեկի շահերին բացի իրենից:

Խրատ, ցուցում, համոզմունք և խուսափում այլ մարդկանց կողմից միակ միջոցներն են, որով հասարակությունը արդարացիորեն կարոն է արտահայտել իր հակակրանքը կամ անհամաձայնությունը անհատի վարքի հանդեպ:

p.87

Այնտեղ, որտեղ ամեն ինչ կատարվում է բյուրոկտրատիայի միջոցով, այն ամենը, ինչին իսկապես դեմ է բյուրոկրատիան, չի կարող երբևէ իրականացվել:

Պետության արժեքը, ի վերջո, այն անձանց արժեքն է, որոնցից բաղկացած է: Մի պետություն, որը ճնշում է իր մարդկանց, որպեսզի նրանք դառնան ավելի հեշտ կառավարելի գործիքներ իր ձեռքերում, նույնիսկ օգտակար նպատակներով, կհասկանա, որ փոքր մարդկանցով ոչ մի մեծ բան չի կարող նվաճվել: *Եվ մեքենայի կատարելությունը, որի համար զոհաբերել է ամեն ինչ, վերջում իրեն ոչ մի օգուտ չի բերի, հանուն այն կենսական ուժի, որը, որպեսզի մեքենան ավելի սահուն գործի, այն նախընտրել է արգելել:*